ՆԱԽԱԳԻԾ
Կ-1337-21.04.2026-ԳԿ-011 ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» 2024 թվականի մայիսի 22-ի ՀՕ-250-Ն օրենքի (այսուհետև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 22-րդ կետում, 18-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ, 10-րդ և 11-րդ կետերում, 25-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետում և 37-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «լրիվ» բառից հետո լրացնել «(ամբողջական)» բառով.

2) 34-րդ կետում «որոշման գործընթաց» բառերից հետո լրացնել «, որը համարժեք է գործատուի կողմից աշխատողի մասնագիտական ունակությունների համապատասխանության գնահատմանը»:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 5-րդ կետում և 11-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետում «(արհեստանոցների)» բառից հետո լրացնել «և բազաների» բառերը:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածը՝

1) լրացնել 1.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Մասնագիտական կրթական ծրագրի համապատասխան մակարդակներում որոշակի որակավորման ծրագիրը սույն օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված հիմնական կրթության հիմքով կազմակերպելու դեպքում, շնորհվում է նաև միջնակարգ կրթության երրորդ աստիճանի որակավորում և տրվում «Հանրակրթության մասին» օրենքով սահմանված ավարտական փաստաթուղթ՝ առանձին կամ միասնական փաստաթղթով:».

2) 3-րդ մասում «հինգ» բառը փոխարինել «չորս» բառով.

3) 9-րդ մասում «ողջամիտ ծավալը» բառերից հետո լրացնել «, որը սահմանվում է սույն օրենքի 7-րդ հոդվածի 9-րդ և 11-րդ մասերով նախատեսված որոշակի որակավորման ծրագրի փորձարկման ներկայացվող ծրագրի ուսումնամեթոդական փաթեթում» բառերը:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում «ծառայությունների» բառից առաջ լրացնել «մանկավարժահոգեբանական և այլ» բառերը.

Հոդված 5. Օրենքի 11-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կրթական ծրագրի իրականացման իրավունքի և որակավորման լիցենզավորումն իրականացնում է Կառավարության ստեղծած բարձրագույն և մասնագիտական կրթության որակի ապահովման մասնագիտացված կառույցի (այսուհետ՝ Մասնագիտացված կառույց) լիցենզավորող հանձնաժողովը՝ համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքին, սույն օրենքի և սույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ մասով նախատեսված Կառավարության որոշումով սահմանված կարգի, պայմանների և այլ նորմատիվ իրավական ակտերի: Մասնագիտացված կառույցի լիցենզավորող հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա կրթության պետական կառավարման լիազոր մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ ՄՈՒՀ-ին տրամադրում է համապատասխան իրավունք և լիցենզիա:».

2. լրացնել 2.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Սույն հոդվածի 3-րդ և 6-րդ մասերով նախատեսված փաստաթղթերի ուսումնասիրության և մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով Մասնագիտացված կառույցը կարող է Լիազոր մարմնին առաջարկել ձևավորել մասնագիտական հանձնաժողովներ՝ համաձայն լիցենզավորման կարգով սահմանված ընթացակարգի:»,

3. 3-րդ մասի՝

1) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) ՄՈՒՀ-ի զարգացման հայեցակարգի առկայությունը, որում սահմանվում է կրթական ծրագրի տվյալ մակարդակի ներդման նպատակը և գործողությունները.».

2) 5-րդ կետում «ուսանողներին» բառը փոխերինել «ուսանողների առնվազն 5 տոկոսին» բառերով:

Հոդված 6. Օրենքի 13-րդ հոդվածում լրացնել 3-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Մասնագիտական կրթական ծրագրի իրականացման իրավունքի և որակավորման լիցենզիան ստանալուց հետո ՄՈՒՀ-ը համարվում է նախահավատարմագրված մինչև սույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված ՄՈՒՀ-երի հավատարմագրման կարգով, չափանիշներով և հավատարմագրման գործողության ժամկետով ՄՈՒՀ-ի հավատարմագրումը: Նախահավատարմագրումը հավատարմագրված լինելուն համարժեք ժամանակավոր կարգավիճակ է, որի ընթացքում ՄՈՒՀ-ը կարող է իրականացնել սույն օրենքով սահմանված իր գործառույթները:»:

Հոդված 7. Օրենքի 14-րդ հոդվածի 17-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Օրենքի 15-րդ հոդվածի՝

1) 5-րդ մասը ուժը կորցրած ճանաչել.

2) 21-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«21. Ուսումնառության ընթացքում ՄՈՒՀ-ը կարող է փոխել որոշակի որակավորման աշխատանքի վրա հիմնված ուսումնառության կազմակերպման ձևը՝ համաձայն սույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված կարգի:»:

Հոդված 9. Օրենքի 16-րդ հոդվածը լրացնել 14.1-ին և 14.2-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ.

«14.1. Մասնագիտական կրթության դիպլոմ է համարվում միայն հավատարմագրված կամ նախահավատարմագրված կրթական ծրագրով ուսումնառության դրական արդյունքով սահմանված կարգով շնորհված դիպլոմը կամ սահմանված կարգով այլ պետությունների ճանաչված ՄՈՒՀ-երի դիպլոմը:

14.2. Մասնագիտական կրթության դիպլոմում նշվում է ՄՈՒՀ-ի, ինչպես նաև կրթական ծրագրի հավատարմագրված լինելու փաստը:»:

Հոդված 10. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 7-րդ կետից հանել «կամ տարակարգ ստացած» բառերը.
2) լրացնել նոր 7.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«7.1) հաստատում է ՄՈՒՀ-ի տարակարգ ստացած մանկավարժական աշխատողների հավելավճարի սահմանման կարգը և չափը.».

3) 8-րդ կետը «ֆինանսավորման» բառից հետո լրացնել «(ինստիտուցիոնալ ֆինանսավորում)» բառերը, իսկ «, այդ թվում՝ ըստ ՄՈՒՀ-ի ֆինանսավորման արդյունքային ցուցանիշների» բառերը հանել.
4) լրացնել նոր 9.1-ին և 9.2-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«9.1) հաստատում է մասնագիտական կրթության մակարդակներում պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող ոլորտների (գերակա ոլորտ) որակավորումներով (ուղղվածությամբ) հիմնական կրթության հիմքով ընդունված ուսանողներին պետական բյուջեի միջոցների հաշվին տարեկան ֆինանսավորում տրամադրելու կարգը.

9.2) հաստատում է մասնագիտական կրթության մակարդակներում պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող ոլորտների (գերակա ոլորտ) և դրանց որակավորումների տարեկան ցանկը.»:

Հոդված 11. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը՝

1) լրացնել նոր 1.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ

«1.1)հաստատում է մասնագիտական կրթական ծրագրի համապատասխան մակարդակի ոլորտային որակավորումների շրջանակի բնութագրերի և ցանկերի, համապատասխան մակարդակի որակավորումների շրջանակային նկարագրի, որակավորումն ապահովող կրթական ծրագրի և դրա ուսումնամեթոդական փաթեթի (ուսումնական մոդուլները, ուսումնական պլանները) մշակելու կարգն ու մեթոդաբանությունը.»,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1-ին կետ.

«12.1) հաստատում է ուսումնառությունը դադարեցրած կամ մեկ հաստատությունից այլ հաստատություն տեղափոխվելու կամ մեկից ավելի կրթական ծրագրով կրթություն ստանալու միջոցով կրթական ծրագրի համապատասխան մակարդակի որակավորման որոշակի փուլ մուտք գործելու և ուսումնառությունը շարունակելու համար ընդունելության կարգ.»,

3) 13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել.

4) 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«17) սահմանում է ՄՈՒՀ-ի վարչական, կառավարման գործառույթ իրականացնող, ուսումնաօժանդակ և մանկավարժական պաշտոնների նկարագրերին ներկայացվող հիմնական չափանիշները.».

5) լրացնել նոր 31.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«31.1) սահմանում է մասնագիտական կրթության մակարդակներում մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրման կարգը.».:

Հոդված 12. Օրենքի 20-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված աշխատանքի վրա հիմնված ուսումնառության և գործնական կարողունակությունների (վերջնարդյունքների) գնահատման ու ճանաչման համակարգումն իրականացնում են կրթության պետական կառավարման լիազոր մարմնի ներկայացմամբ՝ կառավարության որոշմամբ հիմնադրված կազմակերպությունը (այսուհետև՝ ՄԿՈՒ համակարգող կառույց)՝ մի կողմից, և ըստ ոլորտների մասնավոր հատվածի շահերը ներկայացնող ոչ առևտրային կազմակերպությունները (ոլորտային կառույց)՝ մյուս կողմից:».

2) 4-րդ մասում «4. Դուալ ուսումնառությունը համակարգող պատասխանատու մարմինը՝» բառերը փոխարինել «4. ՄԿՈՒ համակարգող կառույցը՝» բառերով.

3) 4-րդ մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5) իրականացնում է կանոնադրությամբ և օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներ:».

4) 5-րդ մասը և 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5. Ոլորտային կառույցը՝

1) վերլուծում և ՄԿՈՒ համակարգող կառույց է ներկայացնում ոլորտի աշխատաշուկայի կարիքները.»:

Հոդված 13. Սույն օրենքի 29-րդ հոդված 11-րդ մասի 1-ին կետում «անընդմեջ չի ընդունել» բառերը փոխերինել «ճանաչել է ոչ բավարար» բառերով.

Հոդված 14. Օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասը՝

1) Լրացնել նոր 2.1-ին և 7-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1) նրա ազատությունը սահմանափակվել է դատարանի որոշմամբ և նրա մասնակցությունը կրթական ծրագրին անհնարին է. »,

«7) դատարանի որոշմամբ ճանաչվել է անհայտ բացակայող կամ մահացած:».

2) Լրացնել նոր 7.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«7.1) Սույն հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերով սահմանված հիմքերով ուսումնառությունը դադարեցրած հիմնական կրթության հիմքով ընդունված և միջնակարգ կրթության երրորդ մակարդակի բաղադրիչը չյուրացրած ուսանողը կարող է կրթությունը շարունակել պետական հանրակրթական ուսումնական հաստատությունում՝ ուսանողի ընտրությամբ:».

3) Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ կետում «:» վերջակետ կետադրական նշանները փոխարինել «.» միջակետ կետադրական նշանով.
4) 8-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետով սահմանված դեպքերում ուսանողի կարգավիճակը վերականգնվում է համապատասխան հիմքերը վերանալու պահից մեկ ամսվա ընթացքում:»:

Հոդված 15. Օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «, ինչպես նաև ուսանողի կեցության, տրանսպորտային ծախսերի, սննդի և օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում» բառերը:

Հոդված 16. Օրենքի 34-րդ հոդվածի՝

1) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Սույն հոդվածի 5-րդ մասի 1-ից 3-րդ կետերով սահմանված պաշտոնների աստիճանակարգությունը փոխկապակցված է ՄՈՒՀ-ի ներքին և արտաքին գնահատման արդյունքում արձանագրված մանկավարժական աշխատողի զբաղեցրած պաշտոնի նկարագրով սահմանված մասնագիտական զարգացման ցուցանիշների հետ, որի շնորհման պայմաններն ու կարգը սահմանվում է ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ:».

2) 12-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4) մասնակցելու մասնագիտական զարգացման եւ խրախուսման ծրագրերին՝ ատեստավորվելու կամ տարակարգ ստանալու նպատակով,».

3) 13-րդ մասը լրացնել նոր 4.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1) մասնակցել հաշմանդամություն ունեցող ուսնողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատմանը, խելամիտ հարմարեցումների սահմանմանը և դրանց կիրառմանը, անհրաժեշտության դեպքում՝ անհատական ուսուցման և աշխատանքի պլանի մշակմանը,»:

Հոդված 17. Օրենքի 35-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասում «երեք» բառը փոխարինե «հինգ» բառով.
2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4. Մինչև սահմանված ժամկետի լրանալը ՄՈՒՀ-ի մանկավարժական աշխատողը կարող է դիմել ատեստավորման, եթե տվյալ ժամանակահատվածում կրթության պետական կառավարման լիազոր մարմինը կազմակերպում է համապատասխան ատեստավորում:».

3) 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«10. ՄՈՒՀ-ի մանկավարժական աշխատողի ատեստավորման արդյունքով կրթության պետական կառավարման լիազոր մարմնի հրամանով հաստատվում է՝ համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին կամ չի համապատասխանում: Ատեստավորմանը չներկայանալու կամ զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու դեպքում մանկավարժական աշխատողը մասնակցում է կազմակերպվող հաջորդ ատեստավորմանը, որին կրկին չներկայանալու կամ կրկին չհամապատասխանելու դեպքում տվյալ աշխատողը համարվում

է զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանող: Զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին հրամարնի հիման վրա մանկավարժական աշխատողի հետ տվյալ պաշտոնի համար կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով:».

4) 11-րդ մասին առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«11. Ատեստավորման արդյունքները կարող են բողոքարկվել դատական կարգով կամ կրթության պետական կառավարման լիազոր մարմին:»

5) 12-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին անձը կարող է մասնակցել միայն պարտադիր ատեստավորման դրական արդյունք ստանալու դեպքում:»:

6) 18-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«18. Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվող մանկավարժական աշխատողը կարող է դիմել ատեստավորման, եթե տվյալ ժամանակահատվածում կրթության պետական կառավարման լիազոր մարմինը կազմակերպում է համապատասխան ատեստավորում:».

7) 25-րդ մասում «երեք» բառը փոխարինել «հինգ» բառով:

Հոդված 18. Օրենքի 38-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասում «2026 թվականի» բառերը փոխարինել «2027 թվականի» բառերով.

2) 5-րդ մասի 1-ին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություններ.

«Սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներն իրականացնելու համար հիմք է ընդունվում կրթության պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած և աստիճանաբար ներդվող, «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով սահմանված արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական ծրագրի մակարդակում տվյալ որակավորման շրջանակային նկարագիրը: Մինչ այդ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերով լիցենզավորման գործընթացին ներկայացված փաթեթում հիմք է ընդունվում նախնական մասնագիտական (արհետավորական) կամ միջին մասնագիտական կրթության տվյալ մասնագիտության որակավորման պետական կրթական չափորոշիչը, կրթական ծրագիրը և համապատասխան մեթոդական փաթեթը:».

3) Լրացնել 5.1-ին, 5.2-րդ և 5.3-րդ մասեր, հետևյալ բովանդակությամբ.

«5.1. Մինչև Կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի 978-Ն որոշման ընդունումը շնորհված հավատարմագրման վկայականները վավեր են մինչև 2029 թվականի դեկտեմբերի 31-ը: Մինչև 2030 թվականի հունվարի 1-ը չհավատարմագրվելու կամ հավատարմագրման չդիմելու դեպքում ՄՈՒՀ-երի մասնագիտական կրթական ծրագրերով տրված լիցենզիաները ենթակա են կասեցման:

5.2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը լիցենզիա և հավատարմագրում ունեցող կրթական

ծրագրերը, շարունակում են համարվել հավատարմագրված հավատարագրման համար սահմանված ժամկետում:
5.3. Մինչև սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված Մասնագիտացված կառույցի ՀՀ կառավարության կողմից ստեղծումը մասնագիտական կրթական ծրագրի իրականացման իրավունքի և որակավորման լիցենզավորումը իրականացնում է Լիազոր մարմինը:».

4) 6-րդ մասում «2026 թվականի հուլիսի» բառերը փոխարինել «2027 թվականի հունվարի» բառերով.:

Հոդված 19.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: